ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Մայիսի 14-ի կիրակին համեմատաբար հանգիստ անցավ Ստեփանակերտում: Զանգվածային գործադուլի շրջանում յուրօրինակ դեր է սկսել կատարել կուսակցության քաղաքային կոմիտեի շենքի առջևի հրապարակը: Այստեղ ամեն օր փոքր խմբերով հավաքվում են մարզային կենտրոնի բնակիչները, որպեսզի կարծիքներ փոխանակեն ստեղծված լարված իրադրության շուրջը, ստանան այս կամ այն տեղեկությունը: Բնակչության շրջանում մասնավորապես տարաբնույթ գընահատական ստացավ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկու վերջին հարցազրույցը տեղական հեռուստատեսության թղթակցի հետ:

Երկուշաբթի՝ մայիսի 15-ին, Ստեփանակերտում աշխատանքային ռիթմը չվերականգնվեց: Ինչպես որ առաջ, գործում են միայն քաղաքի կենսապահովման ձեռնարկությունները, բուժհիմնարկները, կապի ծառայությունը, մթերային խանութները: Դպրոցներում դրությունը տարբեր կերպ է դասավորվում: Միջոցներ են ձեռնարկվում, որ դրանցում պարապմունքները լիովին վերսկսվեն: Սակայն դպրոց են հաճախում միայն ավարտական և մասամբ տարրական դասարանների աշակերտները: Ինչ վերաբերում է արդյունաբերական ձեռնարկություններին, շինարարական կազմակերպություններին, տրանսպորտին, մշակութալուսավորական հիմնարկներին, բնակչության կենցաղսպասարկման, հասարակական սննդի օբյեկտներին, այդ թվում կոոպերատիվ սրճարաններին, ապա դրանք նույնպես չեն գործում: Մարդիկ սպասում են, որ կոնկրետ միջոցներ ձեռնարկվեն իրենց առաջ քաշած պահանջներին համապատասխան: Զգացվում է լարվածություն, որն ստեղծված իրադրության հետևանք է:

Ամբողջությամբ վերցված չի փոխվել իրադրությունը մարզի շրջաններում, գյուղատնտեսական հատվածում աշխատանքները շարունակվում են:

Անցած երկու օրվա ընթացքում անձնագրային ռեժիմի և պարետային ժամի խախտման համար կալանվածների թիվը սովորականից չի անցնում:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթակից)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ